

ու միտքի մեծ խուզարկու մը: Ուղիղ գինովութիւն մըն էր ինծի իր մատենադարանին հոյակապ աշխարհը, անոր կեդրոնին՝ իր սեղանին վրայ գլխահակ մարդը: Դուրեան սրբազանին դասերը շուքն իսկ չեն իր անձին: Դպրեվանքէն երկրորդ ուսուցիչը երիտասարդ վարդապետ մըն էր, խելացի, ճկուն, մարդերը վարող, աշխարհիկ շնորհներով եւ որ յետոյ մեր նուիրապետութեան բարձրագոյն աթոռներէն մէկուն վրայ պիտի գոցէր իր աչքերը՝ իբրեւ Երուսաղէմի պատրիարք:

Այսքան են իմ յիշատակները այդ տարուան մը շրջանէն: Երկուքն ալ անկարող եղան զիս հասկնալու, սորվելու իմ անհուն ծարաւը իր ճիշդ տեղին մէջ գգալու ու չգտան միջոցը զիս վար դնելու, վստահ ըլլալով, որ իրենց խնամքէն դուրս ես սահմանուած էի շատ մը խորնդոտներու, թերեւս կորսուելու հետախաղաղ:

Ու տեղի ունեցաւ անխուսափելին: «Վայրագ գեղացին», որ ես էի, կը դառնար իր տարրին, իր գեղին, քիթը հողին քսելու ստորնութիւնն իսկ գերադաս համարելով սա անհաղորդ մտքի վիճակին: Չէք հարցներ, թէ ի՞նչն էր վէճը 18 տարուայ պատանիի մը եւ Եղիշէ եպիսկոպոս Դուրեանին: Ողբերգական է մեծ մարդոց տկարութիւնը, չըսելու համար տկարամտութիւնը: Իր հոյակապ մատենադարանէն Դուրեան սրբազան ինծի կու տար աճկարեւի գիրքեր, բանասիրական, հմտական, պատմագիտական բովանդակութեամբ: Քրեմլիփցի մէջ այսինչ վանքին տեղադրական, պատմական մանրամասն նկարագրութիւններով: Գետի՛նն անցնէին այդ ամէնը: Նետեցի, կատղած, գիրքեր երեսին ու արցունքով նայեցայ Ռընանին, Սէնթ Պէօվին, Թէնին, Չոլային բաժիններուն, ամէն մէկը քսանէն վեր հատորներով: Սրբազանը չէր հասկնար, թէ ինչու կոչտ էի:... Ինչ հարկ սա յուշերուն: Մարտի առտու մը ես ձգեցի վանքը ու դարձայ իմ գեղը:

Մաթիկ Մելիքիսանեանց հիացում ու արբշուանք միայն ունէր ճեմարանէն: Ու ասիկա տառապանքն էր